Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թ.
օգոստոսի 6-ի նիստի N 37
արձանագրային որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) համակարգող մարմին է:

2. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակը Հայաստանի Հանրապետությունում պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն աջակցելը, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելն ու երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը նպաստելն է:

4. Հանձնաժողովի խնդիրներն ու գործառույթներն են՝

1) մեթոդական առաջարկությունների միջոցով Հայաստանի Հանրապետությունում տարվող պետական երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացումը, երիտասարդությանն առնչվող տարբեր պետական մարմինների համագործակցության ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում համակարգված և հաստեավորված ու նպատակային երիտասարդական քաղաքականության իրականացումը.

3) հանրային կյանքի տարբեր բնագավառներում մարզաբնակ երիտասարդների մասնակցության համար բարենպաստ մթնոլորտի ձևավորումը, երիտասարդական կազմակերպությունների գործունեության ընդլայնման և խրախուսման նպատակով տարբեր կազմակերպական, ծրագրային, ենթակառուցվածքային և այլ խնդիրների ի հայտ բերումը և համապատասխան առաջարկությունների ներկայացումը.

4) մարզաբնակ երիտասարդներին առնչվող և հուզող կրթական, սոցիալական, առողջապահական, բնապահպանական, իրավական և այլ խնդիրների քննարկումը և առաջարկությունների ներկայացումը.

5) մարզաբնակ երիտասարդության (այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների) հոգևոր և ֆիզիկական զարգացման, քաղաքացիական և ազգային գիտակցության բարձրացման, հայրենասիրական դաստիարակության, ազգային հոգևոր-մշակութային ժառանգությանն ու համամարդկային արժեքներին հաղորդակցվելու, ավանդական բարոյական արժեքների քարոզչությանն ուղղված հասարակական նախաձեռնություններին և ծրագրերին, շնորհալի անհատ ստեղծագործողներին և արվեստագետներին աջակցման մեխանիզմների ապահովումը.

6) երիտասարդական միջազգային համագործակցության և միջմշակութային երկխոսության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, երիտասարդական քաղաքականության արդի միջազգային առաջատար փորձի դիտարկումը և կիրառումը, երիտասարդական աշխատանքի և երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառում միջպետական համագործակցության առաջնայնությունների որոշումը և դրանց իրականացման համար մեխանիզմների ապահովումը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի երիտասարդության հարցերի ոլորտը համակարգող տեղակալն է: Հանձնաժողովի նախագահի տեղակալն ի պաշտոնե Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետն է:

6. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ոչ ուշ, քան յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովի նիստ կարող է գումարվել նաև ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և որոշումները ստորագրում են նիստի նախագահողը և քարտուղարը: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած Հանձնաժողովի անդամների հատուկ գրավոր կարծիքները կցվում են արձանագրությանը: Հանձնաժողովի գործունեությանն առնչվող փաստաթղթերն ու որոշումները հրապարակվում են զանգվածային լրատվության միջոցներով և համացանցով:

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ձայների հավասար բաշխման դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

8. Հանձնաժողովն իր աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով կարող է ձևավորել աշխատանքային խմբեր և այդ խմբերում ընդգրկել Հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձանց:

9. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախագահում է Հանձնաժողովի նիստերը.

2) գումարում է Հանձնաժողովի նիստերը.

3) ըստ անհրաժեշտության կարող է Հանձնաժողովի նիստերին հրավիրել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:

10. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) նախագահում է Հանձնաժողովի նիստերը Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում վերջինիս հանձնարարությամբ.

2) ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ, կարող է առաջարկել Հանձնաժողովի նախագահին գումարել Հանձնաժողովի նիստ:

11. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է Հանձնաժողովի նիստի օրակարգը, կազմում արձանագրությունը.

2) Հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում օգնում է Հանձնաժողովի անդամներին ընթացիկ գործերում, ապահովում է գործավարությունը:

12. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) Հանձնաժողովի նիստում հանդես գալու Հանձնաժողովի խնդիրներին ու գործառույթներին վերաբերող առաջարկություններով.

2) քննարկվող հարցի վերաբերյալ ներկայացնելու հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը.

3) դիմելու Հանձնաժողովի նախագահին Հանձնաժողովի կազմից դուրս գալու խնդրանքով:

13. Հանձնաժողովի անդամը կարող է քննարկվող հարցերի վերաբերյալ տալ բանավոր կամ գրավոր եզրակացություններ, մշակել տարբեր հաշվետվություններ, զեկույցներ, առաջարկներ և այլ փաստաթղթեր:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

14. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է 2017 թվականի դեկտեմբերի 30-ին: